

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 29/2

10 հունիսի 2013թ.

Քննարկվեց <ՄԻԿԻ> ՍՊԸ 15.05.2013 թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 13.05.2013 թ-ի թիվ 1008478 ստուգման ակտի դեմ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 13.03.2013 թ-ի թիվ 1008478 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում <Միկի> ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 13.05.2013 թ-ի թիվ 1008478 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 4.311.899 դրամ:

<ՄԻԿԻ> ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 13.05.2013 թ-ի թիվ 1008478 ակտի Շահութահարկի բաժնի Դիզվառելիքի դրվագով արձանագրվել է՝ <Ընկերությունը 2011 թ-ի ընթացքում իրականացնելով դիզվառելիքի մեծածախ վաճառք անկանխիկ եղանակով դուրս է գրել թվով 58 հատ հաշվարկային փաստաթուղթ 49.457.474 դրամ ընդհանուր գումարով, որը ներառել է 2011 թ-ի համախառն եկամտի մեջ որպես հաստատագրված վճարով հարկվող գործունեության մասով ստացված եկամուտ: Խախտվել է <Հաստատագրված վճարների մասին> ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի, <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի <ա> և 10-րդ հոդվածի 2-րդ կետի <ա> ենթակետի պահանջները: Հաշվի առնելով իրացված դիզվառելիքի ձեռք բերման արժեքը՝ գումարով 44.715.531 դրամ, հարկվող եկամուտը կկազմի 4.741.943 դրամ>:

Արդյունքում, տույժ և տուգանքով հանդերձ հաշվարկվել է ընդամենը 2.036.663 դրամ շահութահարկ, այդ թվում՝ շահութահարկ 948.388 դրամ, տույժ 519.242 դրամ և տուգանք 569.033 դրամ:

Դիմողի փաստարկները և հիմնավորումները՝

ա/ <ՄԻԿԻ> ՍՊԸ 2011 թ-ին աշխատել է հաստատագրված վճար վճարողի դաշտում և ըստ այդմ, սահմանված ժամկետներում պետական բյուջե է վճարվել հաստատագրված վճարի գումարները: Ընդ որում, <Հաստատագրված վճարների մասին> ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները /11.05.2011թ. ՀՕ-148-Ն/ ուժի մեջ են մտել 2012 թ-ի հունվարի 1-ից, հետևաբար ստուգվող ժամանակաշրջանի հետ կապ չունեն:

բ/ <ՄԻԿԻ> ՍՊԸ և <ՇՄՁ-23> ԲԲԸ, <Շինաշխարհ>, <Նորոգչին>, <Տիրանուն> ընկերությունների միջև 2011 թ-ի հունվար ամսին կնքվել են բենզինի և դիզ. վառելիքի առուվաճառքի պայմանագրեր: Պայմանագրերի առարկան հանդիսանում է՝ <Պայմանագիրը կազմվում է այն մասին, որ <Գնորդը> Հրազդան քաղաքում կատարում է նոր ջրագծերի տեղադրման աշխատանքներ: Աշխատանքները կատարելու համար վաճառողին պատկանող բենզալցման կետից, որը գտնվում է ք.Հրազդան, Շահումյան և Բաֆֆու խաչմերուկները հարող տարածքում բաց թողնել բենզին և դիզվառելիք <Գնորդին> պատկանող տրանսպորտային և տեխնիկական միջոցներին>: Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ <Գնորդը> պարտավոր է վճարել բենզինի և դիզվառելիքի վճարները <Վաճառողի կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրերով, որոնց չափաքանակները համաձայնեցվում են նախօրոք գնորդի հետ>: 1.4 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է ապահովել տրանսպորտներին և տեխնիկաներին բենզինով և դիզվառելիքով առանց խափանման>:

գ/ Պայմանագրերը կնքվել են և բենզինի և դիզվառելիքի առուվաճառքի վերաբերյալ:

դ/ Ելնելով Պայմանագրով ամրագրված դրույթներից, մեր կողմից լրացվել են հաշվարկային փաստաթղթեր, սակայն այդ հաշվարկային փաստաթղթերով դիզվառելիքի իրացում տեղի չի ունեցել, քանի որ Գնորդները հաշվարկային փաստաթղթերում նշված քանակությունները միանվագ չեն ստացել և չէին կարող ստանալ, այդպիսի տարողություններ չունենալու պատճառով: Նման պայմաններում, ինչպես աշխատել ենք նախկինում, մեր կողմից Գնորդներին տրվել են կտրոններ հաշվարկային փաստաթղթերում լրացված քանակությունների չափով: Միաժամանակ վարվել է դիզվառելիքի բացթողման մատյան /տետր/, որտեղ գրանցվել են գնորդների վարորդների անունը, ազգանունը, ստացված դիզվառելիքի քանակը, ինչպես նաև վերջինիս ստորագրությունը դիզ. վառելիքը ստանալու վերաբերյալ:

Ստուգողները, Ընկերության կողմից ծավալած փաստացի գործունեությունը դիտել են ընդհանուր հարկման դաշտում՝ որպես մեծածախ վաճառքի գործունեություն իրականացնող, անտեսելով հաստատագրված վճարի դաշտում գործունեություն ծավալելու հանգամանքը, մինչդեռ մենք հաստատագրված վճարի դաշտում իրականացրել ենք ոչ թե բենզինի այլ դիզվառելիքի մանրածախ առևտուր, որի վերաբերյալ հարկային օրենսդրության մեջ փոփոխություններ տեղի չեն ունեցել:

Ստուգումն իրականացվել է <<<-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> << օրենքի պահանջների խախտումներով, մասնավորապես՝ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, 6-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ կետերի, 7-րդ հոդվածի պահանջների խախտմամբ:

<<Հաշվապահական հաշվառման մասին>> << օրենքի 10-րդ հոդվածի <է> ենթակետի համաձայն՝ <արժանահավատությունը՝ ֆինանսական հաշվետվությունները համարվում են արժանահավատ, եթե բավարարում են հետևյալ պահանջները՝

- ձևի նկատմամբ բովանդակության գերակայությանը՝ տնտեսական գործունեության արդյունքները հաշվապահական հաշվառման մեջ և ֆինանսական հաշվետվություններում պետք է հաշվառվեն եւ ներկայացվեն՝ ելնելով դրանց տնտեսական բովանդակությունից եւ տնտեսավարման պայմաններից և ոչ թե միայն դրանց իրավական ձևից>:

Սա նշանակում է, որ ստուգմամբ պետք է մեր տնտեսական գործունեությունը գնահատվեր ոչ թե ձևական առումով, այլ բովանդակային գերակայության տեսանկյունից, այսինքն՝ դիզվառելիքի վաճառքի գործարքները դիտվեին որպես մանրածախ առևտուր:

Վերը շարադրված փաստերից ելնելով ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել << ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 13.05.2013 թ-ի թիվ 1008478 ակտի Շահութահարկի բաժնի դիզվառելիքի դրվագով արձանագրված պարտավորությունը, հիմք՝ <<Արկերի մասին>> << օրենքի 18-րդ հոդվածի դրույթը: Ակտի մնացած կետերով արձանագրված խախտումների վերաբերյալ ընկերությունը առարկություններ չունի:

<< ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցիչների և ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձի ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

<ՄԻԿԻ> ՍՊԸ և <Շմշ-23> ԲԲԸ, <Շինաշխարհ> ՍՊԸ, <<Հրազդան Նորոգչին> ՓԲԸ, <Տիրանուն> ՓԲԸ միջև 2011 թ-ին (հունվար, փետրվար ամիսներին) կնքվել են բենզինի և դիզելային վառելիքի առուվաճառքի պայմանագրեր (այսուհետ՝ Պայմանագրեր):

Պայմանագրերի համաձայն <ՄԻԿԻ> ՍՊԸ հանդես է եկել որպես վաճառող, իսկ վերոգրյալ մյուս կազմակերպությունները՝ որպես գնորդ:

Պայմանագրերի 1.2 կետի համաձայն. <Գնորդը պարտավոր է վճարել բենզինի և դիզվառելիքի վճարները Վաճառողի կողմից ներկայացված հաշիվ ապրանքագրերով, որոնց չափաքանակները համաձայնեցվում են նախօրոք գնորդի հետ>:

Պայմանագրերի 1.3 կետի համաձայն. <Գնորդը պարտավոր է վաճառողի կողմից տրված հաշիվ ապրանքագրով բենզինի և դիզվառելիքի գումարը վճարել 10-օրյա ժամկետում, հաշիվ ապրանքագիրը ստանալու օրվանից>:

1.4 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է ապահովել տրանսպորտներին և տեխնիկաներին բենզինով և դիզելովով առանց խափանման»:

Քննարկվող դեպքում <ՄԻԿԻ> ՍՊԸ կողմից Պայմանագրերով նախատեսված պարտավորությունների կատարարման շրջանակներում իրացված բենզինի և դիզելային վառելիքի դիմաց դուրս են գրվել հաշիվ-ապրանքագրեր: Ընդ որում հարկ է նշել, որ իրացված վառելիքի դիմաց վճարումները գնորդ կազմակերպությունների կողմից կատարվել են բանկային փոխանցումներով:

<ՄԻԿԻ> ՍՊԸ կողմից իրացված բենզինի և դիզելային վառելիքի դիմաց հաշիվ-ապրանքագրերի դուրս գրման, վերջիններումս արտացոլված վաճառքի ծավալների, ինչպես նաև համապատասխան վճարումները բանկային փոխանցումներով կատարված լինելու հանգամանքները վկայում են այն մասին, որ <ՄԻԿԻ> ՍՊԸ կողմից իրականացվել է դիզելային վառելիքի ոչ թե մանրածախ, այլ մեծածախ վաճառք: <Ետևապես, ընկերությունը 2011 թվականի ընթացքում պետք է գործեր ոչ թե հաստատագրված վճարների, այլ՝ ընդհանուր հարկման դաշտում:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ ստուգման ակտի 1-ին կետի այն մասը, որը վերաբերվում է դիզելային վառելիքի մատակարարման գծով արձանագրված խախտմանը, կազմվել է << օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հանձնաժողովի 29.05.2013 թ-ի նիստի քննարկման արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն ստուգման ակտը թողնվել է անփոփոխ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը սովել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <<Հարկային ծառայության մասին> << օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ